ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԷԿՈԼՈԳԻԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՍՊԵԿՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍՈՖՅԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Պարենային ծրագրի իրականացումն օրգանապես կապված է բնական ռեսուրսների ինտենսիվ օգտագործման հետ։ Այս առումով խիստ կարևորվում է գյուղատնտեսության մեջ հողային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, դրանց վերարտադրության ու պահպանության խնդիրը։ Պետք է նկատի ունենալ, որ հողի պրոբլեմն ամենից առաջ ենթադրում է ոչ թե դրա պասիվ պահպանությունը, այլ մարդու գիտակցված վերաբերմունքը հողի նկատմամբ, քանի որ ճիշտ հողօգտագործմամբ աստիճանաբար բարձրանում է հողի արտադրողականությունը և տնտեսական պոտենցիալը։

Հողը որպես բնական ռեսուրսների տարատեսակ ունի մի շարք առանձնահատկություններ։ Այն յուրօրինակ բնապատմական գոյացություն է, որը գտնվում է անընդհատ զարգացման ու փոփոխման մեջ։ Հողի մեջ անընդհատ տեղի են ունենում կենսաքիմիական բարդ պրոցեսներ, որոնք կապված են կենդանի օրգանիզմների կենսագործունեության հետ։ Մարդկանց սննդամթերքի 99 և սպիտակուցային կերերի 87%-ը մատակարարում է հողը։ Սակայն կենսոլորտում հողային ծածկոցի նշանակությունը միայն կենսազանգվածի ստացմամբ չի սպառվում։ Հողը միաժամանակ հանդիսանալով կենսոլորտի կարևորագույն բաղադրիչներից մեկը, նպաստում է դրա նորմալ կենսագործունեությանը։

Բնակչության աճի և հասարակական արտադրության աճող մասշտաբների պայմաններում հողային ռեսուրսների (հատկապես գյուղատնտեսության համար պիտանի հողերի) սահմանափակ և անփոխարինելի լինելը հարկադրում են ավելի արդյունավետ օգտագործել եղած հողերը, ուստի մեծանում է հողային ռեսուրսների գիտականորեն հիմնավորված գնահատումների դերը։ Վերջիններիս հիմնական տիպերն են՝ տեխնոլոգիական (արտադրական), սոցիալական, տնտեսական և էկոլոգիական։ Հողային ռեսուրսների ճշգրիտ գնահատումը դրանց օգտագործումից առավելագույն արդյունք ձեռք բերելու անհրաժեշտ պայմանն է։ Հողային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման խնդրի լուծման համար ամենաբարդը հողի շահագործման այնպիսի ռեժիմի սահմանումն է, որի դեպքում առավելագույն տնտեսական արդյունք ստանալու հետ պահպանվի հողի վերարտադրվելու ունակությունը։ Խիստ կարևոր է հողային ռեսուրսների օգտագործման հասկացության մեջ միահյուսված տեխնոլոգիական, սոցիալ-տնտեսական և էկոլոգիական ասպեկտների փոխհարաբերության հարցը։ Պետք է նշել, որ հողի օգտագործման բնույթը որոշող էկոլոգիական և տեխնոլոգիական գործոնների նշանակությունն անընդհատ աճում է. հատկապես պետք է ընդգծել էկոլոգիական գործոնի ակտիվացման թե տնտեսական, թե սոցիալական կարևորությունը։

Խնդիրն այն է, որ հողօգտագործման պրոցեսում միակողմանի չլուծվեն տնտեսական ու էկոլոգիական ասպեկտները, թույլ չտրվի դրանց տեղափոխման (տրանսֆորմացիայի) հնարավորություն, այսինքն՝ տնտեսական ասպեկտները լուծվեն էկոլոգիականի հաշվին կամ հակառակը, քանի որ դրանք ոչ թե հակասող, այլ մեկը մյուսին լրացնող դեր ունեն։

Որքան զարգացած է հասարակության սոցիալ-տնտեսական կարգը, որքան բարձր է գիտության և տեխնիկայի զարգացման մակարդակը, այնքան մեծ է մարդու ներգործությունը հողի վրա, և նա ավելի շատ է փոխում նրա

բնական հատկությունները։ Ընդ որում, իր ներգործությամբ և միջամտությամբ նա կարող է և՛ բարձրացնել, և՛ իջեցնել հողի բերրիությունը, ավելացնել կամ պակասեցնել հողի ջրային էրոզիան, դեֆլյացիան (հողային էրոդիա), աղակալումը, ճահճացումը, այսինքն՝ խանգարել հողակազմող պրոցեսների նորմալ ընթացքը։

Գյուղատնտեսական հողահանդակները զբաղեցնում են մեր հանրապետության ընդհանուր տարածքի կեսից էլ պակաս մասը՝ 46,6%-ը։ Հողի օգտագործման ցածր գործակցի հիմնական պատճառը հանրապետության տարածքի մարերևույթի լեռնային խիստ մասնատված բնույթն է, ուժեղ քարքարոտությունը։

Հողօգտագործման լրիվ բնութագիրը տալիս է հողահանդակների տրանսֆորմացիան։ 1940—1985 թթ. ընթացքում էական փոփոխություններ են կատարվել գյուղատնտեսական հողահանդակների ինչպես ընդհանուր տարածության, այնպես էլ կառուցվածքի մեջ։ Գյուղատնտեսական հողահանդակներն այդ նույն ժամանակահատվածում կրճատվել են 709,6 հազ. հեկտարով, կամ ավելի քան $^1/_3$-ով։ Միջին հաշվով տարեկան 15,8 հազ. հեկտար հողահանդակներ դուրս են եկել գյուղատնտեսական շրջանառությունից, այդ թվում՝ 3,2 հազ. հեկտար վարելահող, 13,4 հազ. հեկտար արոտավայր։ Գյուղատնտեսական հողահանդակների կառուցվածքում առավել աչքի ընկնող տեղաշարժը արոտավայրերի և վարելահողերի ընդհանուր տարածության կրճատումն է։ 1985 թ. 1940 թ. համեմատությամբ վարելահողերը կրճատվել են 142,4 հազ. հեկտարով (22,6%) և 629 հազ. հեկտարից հասել են 486,6 հազ. հեկտարի (նույնիսկ եթե նկատի ունենանք, որ դրանց մի մասն օգտագործվել է բազմամյա տնկարկների տակ), իսկ արոտավայրերը կրճատվել են գրեթե կիսով չափ՝ 1278 հազ. հեկտարից հասել են 671,5 հազ. հեկտարի։ Ինչ վերաբերում է բազմամյա տնկարկներին, ապա դրանք նույն ժամանակահատվածում ընդլայնվել են՝ 29 հազ. հեկտարից հասնելով 86,6 հազ. հեկտարի կամ աճել են 3 անգամ[1]։

Ներկայումս հողային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման հարցերն առնչվում են նաև գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողահանդակների, ինչպես նաև գյուղատնտեսության մեջ տարբեր հողահանդակների միջև օպտիմալ հարաբերակցություն ապահովելու հետ, գերակշռությունը տալով բնական լանդշաֆտների պահպանմանը։

Վերն ասվածից երևում է, որ մեզանում բնական կերային հանդակների նվազման միտումն ակնհայտ է։ Ելնելով ռեգիոնալ առանձնահատկություններից և կենսական միջավայրի բարելավման շահերից, այսուհետև նպատակահարմար չէ բնական կերահանդակների կրճատումը։ Հայտնի է, որ հողը վարելու պրոցեսն անխուսափելիորեն ուղեկցվում է բնական հավասարակշռության խախտմամբ, մինչդեռ բնական կերահանդակները և անտառները նպաստում են այդ հավասարակշռության պահպանմանը և վերականգնմանը։ Ուստի համապատասխան ջրային հաշվեկշիռը և հողերը քայքայումից ու դեգրադացիայից պահպանելու համար անհրաժեշտ էկոլոգիական պայմաններ ապահովելու նպատակով, հողօգտագործման պլանավորման ժամանակ պետք է հաշվի առնել օպտիմալ հարաբերակցությունը վարելահողերի և բնական կերահանդակների միջև, ինչպես նաև խոտհարքների և արոտավայրերի միջև[2]։

Հանրապետությունում մեծ աշխատանք է կատարվում չօգտագործվող և սակավաբեր հողահանդակները գյուղատնտեսական ակտիվ շրջանառության մեջ ներգրավելու միջոցով մշակելի հողային ռեսուրսներն ավելացնելու ուղղու-

---

1 Հաշվարկված է «Народное хозяйство Армянской ССР в 1985 г.», стат. ежегодник. Ереван, 1986 (с. 114); «Атлас сельского хозяйства Армянской ССР», Москва—Ереван, 1984 (с. 98) նյութերի հիման վրա։

2 Կենտրոնական տնտեսամաթեմատիկական ինստիտուտում կատարված նախնական հաշվարկները ցույց են տվել, որ մեր երկրում էկոլոգիական հաշվեկշռի կառավարումը, այն է՝ վարելահողերի տարածությունների խելամիտ կրճատումն այն տեղերում, որտեղ նկատվում է չափից ավելի հերկում, և դրանց որոշ չափով ավելացումը այնտեղ, որտեղ տարածքը լրիվ չի օգտա-

թյամբ։ 1975—1984 թթ. ընթացքում շրջանառության մեջ են դրվել ավելի քան 19 հազ. հեկտար նոր հողեր[3]։

Այդ ամենով հանդերձ, բնակչության մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական հողահանդակները ունեն կրճատման միտում։ Հանրապետությունում 1985 թ. 1940 թ. համեմատությամբ մեկ շնչին ընկնող գյուղատնտեսական հողատարածությունները պակասել են 3,9 անգամ, իսկ վարելահողերը՝ 3,4 անգամ։ Ջնայած խոպան հողերի հերկմանը, ճահիճների չորացմանը, նույնիսկ ՍՍՀՄ-ում վարելահողերի տարածությունը վերջին տարիներին նվազել է։ Եթե 1953 թ. մեկ բնակչին ընկնում էր 1 հեկտար վարելահող, ապա 1985 թ.՝ 0,82։ Հայկական ՍՍՀ-ում բնակչության մեկ շնչին ընկնող վարելահողերը միութենական միջինից 5,9 անգամ պակաս են[4]։ Այստեղից հետևում է, որ հողի յուրաքանչյուր հեկտարը հանրապետությունում պետք է հաշվի առնվի, պետք է օգտագործվեն գյուղատնտեսական հողահանդակների պահպանման և դրանց բերրիության բարձրացման բոլոր հնարավորությունները։

Հեռանկարում բնակչության մեկ շնչի ապահովվածությունը գյուղատնտեսական հողատարածությամբ և վարելահողով կնվազի՝ բնակչության աճի և ոչ գյուղատնտեսական նպատակով հատկացումների մեծացման պատճառով։

Արդի պայմաններում գյուղատնտեսության զարգացմանն առաջադրվող ամենակարևոր պահանջներից է հողային ռեսուրսների որակական և քանակական պահպանումը, որը մեր սակավահող հանրապետության էկոլոգիական քաղաքականության հրատապ հարցերից է։

Գյուղատնտեսական հողահանդակների կրճատումը տեղի է ունենում հետևյալ երկու խումբ պատճառներով։ Առաջինը՝ հողի դեգրադացիան է, հողի բերրիության նվազումը, նրա քայքայումն ինչպես բնական պրոցեսների ազդեցության, այնպես էլ մարդու կողմից ոչ խելացի հողօգտագործման հետևանքով։ Երկրորդ խումբ պատճառները կապված են գիտատեխնիկական առաջընթացի, ինդուստրացման, ուրբանիզացիայի և այլնի հետ։

Հողի պահպանության պետական քաղաքականության իրավական նորմերը սահմանված են «ՍՍՀՄ և միութենական հանրապետությունների հողային օրենսդրության հիմունքներում»։ Հողօգտագործման բարելավման անհրաժեշտությունը վավերացված է նաև ՍՍՀՄ սահմանադրության մեջ։ Պետական մարմիններն իրականացնում են հողաշինարարական մեծ ծավալի միջոցառումներ։ Միաժամանակ ոչ գյուղատնտեսական նպատակների համար հողերի հատկացումների մասշտաբները բավական մեծ են և ամեն տարի օտարվող այդ հազարավոր հեկտար հողերի մի մասը գյուղատնտեսական հողահանդակներ են, անգամ վարելահողեր։ Ուստի կարևոր է ընտրել շինարարության այնպիսի տարբերակներ, որոնք պահանջում են ավելի քիչ հողային տարածություններ։ Բացի այդ, ժողովրդատնտեսական և այլ կարիքների համար առաջին հերթին պետք է առանձնացնել գյուղատնտեսությանը ոչ պիտանի հողակտորներ և ավելի քիչ արժեքավոր հանդակներ։ Այսպես, Հրազդանի կառուցումները կարելի էր կատարել մոտակա լանջերին և ոչ թե շարքից դուրս բերել բարձր բերքատու Մարմարիկի սևահողային հովիտը, կամ

գործվում, կարող է հնարավորություն տալ տարեկան ստանալու հացահատիկի 250—280 մլն տ, կայուն բերք, եթե ընդհանուր ցանքատարածությունները կրճատվեն՝ 1978 թ. 218,2 մլն հեկտարից և հասցվեն 210 մլն հեկտարի, իսկ հացահատիկային կուլտուրաներինը՝ 128,5 մլն-ից մինչև 120 մլն հեկտարի (Н. П. Федоренко, М. Я. Лемешев, Н. Ф. Реймерс, Социально-экономическая эффективность охраны природы («Природа», 1980, № 10, с. 10):

3 «Սովետական Հայաստան», 12. XII. 1984։

4 Հաշվարկված է «Народное хозяйство Армянской ССР в 1985 г.», стат. ежегодник, Ереван, 1986 (с. 7, 114); «Атлас сельского хозяйства Армянской ССР», Москва—Ереван, 1984 (с. 98); «Народное хозяйство СССР в 1985 г.», стат. ежегодник, М., 1986 (с. 5, 202) նյութերի հիման վրա։

Հրազդան քաղաքի շինարարությունը կատարել ոչ թե Մաքրավանքի սևահողերի, այլ լանջերի կամ մշակման համար ոչ պիտանի հողերի վրա և այլն[5]։

Մեր սակավահող հանրապետության համար գյուղատնտեսական հողահանդակների, մասնավորապես վարելահողերի ռացիոնալ և արդյունավետ օգտագործման հարցը մեկ անգամ չէ, որ քննարկվել է։ Այդ հարցին կրկին անդրադարձավ ՀԿԿ XXVIII համագումարը, որտեղ մասնավորապես նշվեց, որ հողային ֆոնդը դեռևս լրիվ և ռացիոնալ չի օգտագործվում։ Հողի նկատմամբ անտնտեսվար վերաբերմունքի պատճառով Ազիզբեկովի, Ղափանի, Կալինինոյի և մի շարք այլ շրջաններում վարելահողերի տարածությունը շարունակում է կրճատվել[6]։ Ոչ գյուղատնտեսական նպատակների համար վարելահողերի օգտագործումը անթույլատրելի պետք է համարել։ Միայն 1978 թ. գյուղատնտեսական շրջանառությունից դուրս է մնացել 23,3 հազ. հեկտար վարելահող, իսկ 1979 թ.՝ 19,5 հազ. հեկտար և այլն[7]։

1987 թ. մայիսի 18-ին ՍՍՀՄ Մինիստրների խորհրդում քննարկվեց Հայկական ՍՍՀ-ում բնապահպան օրենսդրության կատարման հարցը և նշվեց, որ հանրապետությունում հարկ եղած միջոցները չեն ձեռնարկվում հողը էրոզիայից և ջրածածկումից պաշտպանելու համար, թույլ է տրվում արժեքավոր գյուղատնտեսական հողահանդակների հատկացում ոչ գյուղատնտեսական նպատակների համար[8]։

Հանրապետությունում ստեղծվել է հակասական իրավիճակ՝ մի կողմից հսկայական միջոցներ են հատկացվում նոր հողերի յուրացմանը, մյուս կողմից՝ ամեն տարի քաղաքաշինությանը և արդյունաբերական շինարարությանը տրամադրվում են գյուղատնտեսական արժեքավոր հողահանդակներ։

Հայկական ՍՍՀ-ում զգալի հողատարածություններ են հատկացվում գետերի տարեկան հոսքը կանոնավորելու նպատակով մեծ կամ փոքր ջրամբարներ կառուցելու համար։ Ընդ որում, ջրատնտեսական շինարարությանը հատկացվող հողատարածությունների մեջ գերակշռում են գյուղատնտեսական հողահանդակները։ Ներկայումս գործող ջրամբարների տակ եղած հողերի ավելի քան 65%-ը գյուղատնտեսական հողահանդակներ են։ Ոռոգվող հողատարածությունների ընդլայնման ու ջրապահովվածության բարձրացման նպատակով հեռանկարում նախատեսվում է կառուցել 30 նոր ջրամբարներ, որոնց համար պահանջվում է հատկացնել մոտ 3,8 հազ. հեկտար գյուղատնտեսական հողահանդակներ, այդ թվում ավելի քան 1,8 հազ. հեկտար վարելահող, 0, 1 հազ. հեկտար բազմամյա տնկարկներ, 1,9 հազ. հեկտար խոտհարք և արոտներ[9]։ Սակայն անհրաժեշտ է նշել հետևյալ հանգամանքը. գյուղատնտեսության ինտենսիվացման կուրսի իրականացումը ենթադրում է ոչ միայն զգալիորեն մեծացնել նոր ջրամբարների և ոռոգման համակարգերի կառուցմանը հատկացվող կապիտալ ներդրումները, այլև բարձրացնել եղած ջրատնտեսական կառույցների օգտագործման արդյունավետությունը։ Ներկայումս նպատակահարմար է առաջնությունը տալ ոռոգման ջրի նպատակային օգտագործմանը, նրա ռեզերվների բացահայտմանը, այլ ոչ թե նոր ջրամբարների շինարարությանը։

Գյուղատնտեսական հողահանդակների քանակական կորուստներին զուգընթաց տեղի է ունենում հողի որակական վատացում, նրա բերրիության նվազում, քայքայում։ Դա մասամբ բնական պրոցեսների հետևանք է, այսինքն՝ բնության մեջ առանց մարդու միջամտության հողի քայքայման, սակայն ավելի շատ կապված է աճող անտրոպոգեն ճնշման, մարդու ոչ ճիշտ կազմակերպ-

---

5 Ե. Միրիմանյան, Բնության պահպանության հիմնական խնդիրները, Երևան, 1979, էջ 37։

6 «ՀԿԿ XXVIII համագումարի նյութերը», Երևան, 1986, էջ 27։

7 «Սովետական Հայաստան», 28. IV. 1980։

8 Նույն տեղում, 21. V. 1987։

9 Տվյալները վերցված են «Հայպետհողշինախագիծ» ինստիտուտից։

ված արտադրական գործունեության և հողային ծածկոցի ու նրա էկոլոգիական սայմանների ռեգիոնալ առանձնահատկությունների ոչ անհրաժեշտ հաշվառման հետ։ Այդ պրոցեսը դրսևորվում է հողի վերին բերրի շերտի ոչնչացմամբ, թունավոր նյութերով աղտոտմամբ[10], աղակալմամբ ու ճահճացմամբ, էրոզիայով, արոտների դեգրադացիայով և այլն։ Այսպիսով, հողային ծածկոցի պահպանության հետ կապված պրոբլեմների շրջանակը չափազանց լայն է։ Սակայն հողի վրա անտրոպոգեն ներգործության ամենից շատ տարածված և կործանիչ ձևն էրոզիան է։ Պետք է ասել, որ այդ պրոբլեմը նոր չէ, և բազմիցս քննարկվել է, սակայն հանրապետության գյուղատնտեսության առջև ծառացած նոր խնդիրների կապակցությամբ դրա լուծումը նոր բնույթ է ստանում և դառնում ավելի հրատապ։ Մեր հանրապետությունում կան լեռնալանջեր, ինչպիսիք են Զանգեզուրի, Վայքի, Արեգունու և Սևանա լեռնաշղթաների հարավհայաց լանջերը, Վեգի, Փամբակ գետերի հովիտները և այլն, որտեղ մեկ սերնդի կյանքի ընթացքում հողի 20—30 սմ հաստությամբ վարելաշերտը լիովին տեղատարվել է[11]։

Հայկական ՍՍՀ-ում վերջին մի քանի տասնամյակների ընթացքում ինտենսիվորեն են զարգացել անտրոպոգեն ծագում ունեցող սողանքային երևույթները, էրոզիոն պրոցեսները, լանդշաֆտների դեգրադացիան, մեծացել է հեղեղների ազդեցությունը։ Բնական միջավայրի զգալի վատթարացում է նկատվում այնպիսի կարևոր տեղանքում, ինչպիսին Սևանի ավազանն է։ Հավանաբար մեզանում դեռևս թերագնահատվում է հողերի էրոզիայի կանխման պրոբլեմի կարևորությունը։ Դրանով պետք է բացատրել հանրապետության այդքան փոքր տարածքի վրա լքված հողերի առկայության փաստը։ Ինչպես նշված է ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի 1967 թ. մարտի 20-ի որոշման մեջ, էրոզիայից հողերի պահպանումը դիտվում է որպես պետական կարևորագույն խնդիր, որի իրականացման համար անհրաժեշտ է ձեռք առնել անհետաձգելի միջոցառումներ։ Էրոզիոն պրոցեսների կանխումը, էրոզիայի ենթարկված հողերի իրացումն ու գյուղատնտեսական շրջանառության մեջ ներգրավելը հանրապետության գյուղատնտեսության հետագա զարգացման համար որոշիչ նշանակություն ունեն։

Ջրային էրոզիան զարգացած է հանրապետության գրեթե բոլոր շրջաններում, որը մեծ վնաս է պատճառում ոչ միայն գյուղատնտեսությանը, այլև ամբողջ ժողովրդական տնտեսությանը[12]։

Չնայած վերջին երեք տասնամյակների ընթացքում ընդունվել են մի շարք որոշումներ, որոնք ուղղված են էրոզիայի դեմ պայքարի միջոցառումները կատարելագործելուն, այնուամենայնիվ գործնականում հողի պահպանման հարցում էական տեղաշարժեր չեն նկատվում։ Հանրապետության ընդհանուր տարածքի մոտ 50%-ը և գյուղատնտեսական հողահանդակների ավելի քան $^1/_3$ մասն այս կամ այն աստիճանի ենթարկված են էրոզիայի, իսկ որոշ շրջաններում հողահանդակների էրոզացումը հասնում է 60—70%-ի։ Էրոզացված են հանրապետության վարելահողերի 23,4%-ը, արոտավայրերի՝ 45,8, խոտհարքների՝ 13,6 և բազմամյա տնկարկների 8,3%-ը[13]։

---

10 Սովետական, ինչպես նաև արտասահմանյան գիտնականների հաշվարկներով, արդյունաբերական վնասակար արտանետումների ազդեցության հետևանքով հացահատիկային կուլտուրաների բերքի կորուստը կազմում է 20—25%, պտղատու կուլտուրաներինը՝ 35—40, իսկ կերայինը՝ 35—50% («Экономика сельского хозяйства», 1978, № 11, с. 49)։

11 «Ռացիոնալ բնօգտագործման աշխարհագրական ասպեկտները Հայկական ՍՍՀ-ում», Երևան, 1985, էջ 16։

12 Ներկայումս էրոզիոն պրոցեսների ինտենսիվությունը համարյա 10 անգամ դերազանցում է հողագոյացման տեմպերին («Международный сельскохозяйственный журнал», 1983, № 4, с. 31)։

13 Տվյալները վերցված են «Հայպետհողշինախագիծ» ինստիտուտից։

էրոզացման աստիճանի ավելացման հետ նկատելիորեն նվազում է հողածածկոցի հզորությունը, քայքայվում է վերին՝ ամենաբերրի շերտը, խիստ վատանում են նրա ագրոարտադրական հատկությունները (ջրաֆիզիկական, ֆիզիկամեխանիկական), որի հետևանքով իջնում է գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը, ինչպես նաև որակը (օրինակ՝ հացահատիկի մեջ նվազում է սպիտակուցային նյութերի, օսլայի պարունակությունը), բարձրանում է արտադրանքի ինքնարժեքը և շատ հաճախ դրանց մշակությունը դառնում է տնտեսապես ոչ ձեռնտու[14]։ Այս բոլորը բնականաբար հասցնում են նրան, որ նման վարելահողերը դուրս են գրվում օգտագործումից և փոխանցվում ցածրարժեք հողահանդակների շարքը։ Բայց բերքատվության նվազումը և որակի վատացումը էրոզիայի պատճառած վնասի միայն աննշան մասն է, իսկ եթե հաշվի առնենք նաև այն, որ ապագայում հողն առհասարակ կզրկվի բերրի ծածկոցից, որի արժեքը դրամով գնահատելն անհնար է, ապա պարզ կդառնա խնդրի ողջ կարևորությունն ու բարդությունը։ Տեղին է հիշել Կ. Մարքսի հետևյալ խոսքերը. «Նույնիսկ մի ամբողջ հասարակություն, ազգ, մինչև անդամ հենց համաժամանակյա բոլոր հասարակությունները միասին վերցրած հողի սեփականատերերը չեն։ Նրանք հողին տիրում են միայն, սրանից օգտվում են և իբրև ընտանիքի պատվական հայրեր, նրանք պետք է հողը բարելաված վիճակում ժառանգություն թողնեն հաջորդ սերունդներին»[15]։

Էրոզիան բացասաբար է ազդում նաև շրջակա բնական միջավայրի այլ բաղադրիչների, հատկապես ջրային ռեսուրսների վրա։ Ուժեղ էրոզիայի հետևանքով մեծանում է ջրերի աղտոտումը, իջնում է որակը։ Թեք լանջերում հոսող ջրերի հետ գետերն ու ջրավազաններն են լցվում նաև գյուղատնտեսության մեջ օգտագործվող քիմիական նյութեր՝ հանքային պարարտանյութեր, պեստիցիդներ և անասնապահական համալիրների հոսքաջրեր։ Եվ, վերջապես, ջրային էրոզիան նպաստում է ջրավազանների անցանկալի փոփոխություններին (էվտրոֆիկացիային)։

Հողի էրոզիան սոցիալական երևույթ է, հասարակության կենսագործունեության արդյունք։ Ուստի էրոզիայի կանխման խնդիրը ռեալ է դառնում միայն այդ գործունեության կարգավորման ուղիով։

1950-ական թվականներին Հայկական ՍՍՀ-ն սեփական հացով ապահովելու նպատակով որոշում ընդունվեց հացահատիկ ցանելու համար հերկել մոտ 300 հազ. հեկտար արոտավայրեր և խոտհարքներ։ Բայց շատ կարճ ժամանակամիջոցում այդ հողատարածություններում էրոզիայի ուժեղ զարգացումը և չափազանց ցածր բերքատվությունը ստիպեցին հրաժարվել նման մոտեցումից, որը չուներ էկոլոգիական հիմնավորում։ Արդյունքը եղավ այն, որ զգալի հողատարածություններ դուրս գրվեցին գյուղատնտեսական շրջանառությունից։ Գյուղատնտեսական հողահանդակների զգալի կրճատում տեղի ունեցավ հյուսիս-արևելյան անտառային գոտում։ Ալավերդու և Իջևանի շրջաններում 1955—1959 թթ. ընթացքում գյուղատնտեսական հողահանդակների ընդհանուր տարածությունը կրճատվեց 20, իսկ արոտավայրերինը՝ 28%-ով։ Թալինի շրջանում այդ նույն ժամանակամիջոցում արոտավայրերի ֆոնդը կրճատվեց 33%-ով։ Զգալի հողատարածություններ կրճատվեցին նաև Սևանի շրջանում։ 1953 թ. հետո, այսինքն թեք լանջերը վարելուց 3—4 տարի անց, դուրս են գրվել 177 հազ. հեկտար վարելահողեր կամ դրանց ընդհանուր տարածության 27,7%-ը։ Այդ ժամանակաշրջանում դուրս են գրվել ոչ միայն 1950 թ. հետո

---

14 Տ. Խաչատուրովի գնահատմամբ ՍՍՀՄ-ում էրոզիայի հետևանքով գյուղատնտեսության համախառն արտադրանքի ամենամյա կորուստը հասնում է 8—10%-ի։ Մեր հանրապետությունում էրոզիայի պատճառած վնասի հետևանքով գյուղատնտեսության համախառն արտադրանքի ամենամյա կորուստը կազմում է 40—45 մլն ռուբլի («Вопросы экономики», 1985, № 4, с. 78)]։

15 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, մաս 2, գիրք 3, Երևան, 1949, էջ 314։

վարած 60 հազ. հեկտար լանջերում ընկած վարելահողերը, այլև նախկինում մշակված, ուժեղ էրոզիայի ենթարկված լանջերի վարելահողերը[16]։

Հայկական ՍՍՀ սակավահողության պայմաններում գյուղատնտեսական հողահանդակների հետագա կրճատումը տնտեսապես չի արդարացվում։ Ուստի կարևոր պրոբլեմ է համարվում օգտագործումից դուրս եկած շուրջ 177 հազ. հեկտար վարելահողերի իրացումն ու գյուղատնտեսական շրջանառության մեջ փոխադրումը, որը թելադրվում է ոչ միայն լանջերը բարձր արտադրողականությամբ օգտագործելու, այլև էրոզիոն պրոցեսների զարգացման վտանգավոր օջախներն ամրացնելու և շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքարելու շահերով։

1940-ական թվականներին Գուգարքի շրջանում ու Սևանի ավազանում մեծ տարածությամբ ճահճային հողեր բարելավվեցին և մելիորատիվ միջոցառումների շնորհիվ վերածվեցին վարելահողերի ու խոտհարքների։ Սակայն արդյունքները ցույց տվեցին, որ ճահճային տարածությունները բերքատու հողերի վերածմամբ խախտվեց բնական հավասարակշռությունը որոշակի սահմաններում։ Այդ հանգամանքը բացատրվում է նրանով, որ ճահիճները ջրային ռեսուրսների շտեմարան են, կանոնավորում են շրջապատի ջրային ռեժիմը. այնտեղ ապրում ու զարգանում են բազմաթիվ օգտակար թռչուններ և այլ կենդանիներ։ Ճահիճները չորացնելուց հետո հաճախ նվազում են գետերն ու աղբյուրները, կլիման չորային է դառնում, օդի խոնավությունը պակասում է, օգտակար թռչուններն ու այլ կենդանիներն անհետանում են, ինչպես այդ տեղի ունեցավ Սևանի մակարդակը նվազելու հետ կապված Գիլլի լճի վերացման հետևանքով։ Սա ևս տնտեսական գործունեության էկոլոգիական հիմնավորվածության բացակայության օրինակ է։ Այն հաստատում է, որ տնտեսական զարգացման նախկին սկզբունքները չեն բավարարում ժամանակակից էկոլոգիական պահանջները։

Այստեղից հարց է առաջանում, արդյո՞ք միակողմանի չէ մոտեցումը նաև Արարատյան դաշտավայրի աղակալած հողերի իրացման և բարելավման նկատմամբ։ Անվիճելի է, որ Արարատյան դաշտավայրի 30 հազ. հեկտար պոտենցիալ բարձր արտադրողականություն ունեցող աղակալած հողերի իրացումը մեզանում ոռոգելի հողերի ընդլայնման կարևորագույն ռեզերվներից է։ Սակայն առաջներում թույլ տրված սխալները չկրկնելու և ավանդական եղանակներով բնական համալիրներում կատարվող փոփոխություններից առաջացած տնտեսական վնասները կանխելու համար, նոր կարևորություն է ստանում այս հարցին անհրաժեշտ էկոլոգիական և սոցիալական հիմնավորում տալը[17]։

Լուրջ պրոբլեմ է նաև բնական կերահանդակների բարելավումը և պահպանումը։ Գեղամա լեռների, Արագածի ու Միսխանայի, Լեջանի, Լալվարի, Եղեգնաձորի ու Զանգեզուրի լեռնային արոտները հանրապետության անասնապահության հիմնական բազան են, որոնք ապահովում են անասունների կերի տարեկան պահանջի 30—35%-ը։ Դրանք գտնվում են մեծ թեքությունների վրա և մշտապես ենթակա են ակտիվ էրոզիայի, առավել ևս, եթե զրկվում են խոտածածկից։ Երկար տարիների ընթացքում անհամակարգ և ոչ ռացիոնալ օգտագործման հետևանքով արոտները որակական լուրջ փոփոխություններ են կրել, նվազել են կենսազանգվածի արտադրության տեմպերը, ընկել է արտադրողականությունը, տեղի է ունեցել բուսական բարձրարժեք տեսակների կորուստ, լեռնամարգագետնային հարուստ հողերը ենթարկվել են ճահճացման։

---

16 Է. Մ. Հայրապետյան, Գյուղատնտեսական օգտագործումից դուրս եկած հողերի յուրացման ուղիները, Երևան, 1979, էջ 7։

17 Ներկայումս Մեծամոր գետն աղտոտվում է Արարատյան դաշտավայրի աղուտները քիմիական մելիորացիայով յուրացնելու ժամանակ. հողերի լվացման ջրերի հետ գետն են թափվում քիմիական նյութեր, որոնք կործանարար ազդեցություն են ունենում կենդանական աշխարհի վրա [Ս. Գ. Գ ա բ ա յ ա ն («Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1981, № 10, էջ 24)]։

Բուսականության տեսակային կազմի այդպիսի փոփոխությունները վկայում են արոտների դեգրադացիայի մասին։ Բուսածածկի ժամանակակից վիճակը առաջին հերթին անտրոպոգեն գործոնների արդյունք է։ Ամենամեծ չարիքը լեռնային արոտների հողային ծածկոցի քայքայումն է, դրանում աստիճանաբար զարգացող էրոզիան։ Մի բան պարզ է, որ լեռնային պայմաններում էրկրագործության վարումը առանց արդյունավետ հողապաշտպան միջոցառումների կիրառման, ակտիվացնում է էրոզիոն պրոցեսները։

Արոտների դեգրադացիայի փաստը ինքնին խոսում է այն մասին, որ մենք չենք կարող առաջնորդվել միայն բնությունից վերցնելու սկզբունքով։ Եվ քանի որ բնական ռեսուրսների շահագործման հետ կապված «արտադրություն—բնություն» փոխազդեցությունը գնալով մեծանում է, ուստի անհրաժեշտ է դառնում հաշվի առնել նաև էկոլոգիական պահանջները։ Տվյալ դեպքում տնտեսական և էկոլոգիական պահանջների միջև հակասություն առաջացավ այն պարզ պատճառով, որ մենք տնտեսական արդյունավետությունն ապահովեցինք էկոլոգիական պահանջները շրջանցելով։ Անշուշտ, դա արդարացվեց կարճ ժամանակահատվածի համար, բայց եթե հարցը քննվի հեռանկարի առումով, ապա միայն էկոլոգիական պահանջների բավարարումը կարող է տնտեսական գործունեության հետագա զարգացման ռեալ հիմք ստեղծել։

Բանն այն է, որ արտադրական գործունեության ավանդական գնահատումը սահմանափակվում է միայն վերջնական արդյունքների հաշվարկումով, որը միակողմանի է և չի համապատասխանում ժողովրդատնտեսական երկարաժամկետ շահերին։ Այդպիսի գնահատումը կարող է աղավաղված պատկերացում տալ իրական տնտեսական արդյունքի մասին։

Շրջակա միջավայրի վրա անտրոպոգեն ծանրաբեռնվածության մեծացման հետևանքով տեղի ունեցող էկոլոգիական փոփոխությունները մինչև այժմ չունեն քանակական արտահայտություն, արժեքային գնահատում։ Մինչդեռ վերջինս թույլ կտար կանխելու էկոլոգիական շատ անցանկալի հետևանքներ։

Հողօգտագործման վիճակի բարելավման և հողային ռեսուրսների պահպանման համար կարևոր նշանակություն ունի գյուղատնտեսության պլանավորման և կառավարման կատարելագործումը։ Մինչդեռ գյուղատնտեսության պլանավորման համակարգում դեռևս լայնորեն չեն արտացոլվում այն պրոբլեմները, որոնք կապված են շրջապատող միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման հետ։ Ակնհայտ է դարձել համապատասխան պլանային ցուցանիշների մշակման անհրաժեշտությունը, ցուցանիշներ, որոնք արտացոլեն հողային, ջրային ռեսուրսների պահպանության ծախսերը և դրանց արդյունավետությունը, իսկ վերջին հաշվով, խթանեն գյուղատնտեսական ձեռնարկությունների գործունեությունը։

Անհրաժեշտ է պլանավորել ոչ միայն բնապահպան միջոցառումների համար հատկացվող ծախսումները, այլև դրանցից ստացվող արդյունքները։ Օրինակ, չի հաշվարկվում, թե արմատական ու մակերեսային բարելավումից հետո որքանով է բարձրանում խոտհարքների ու արոտավայրերի բերքատվությունը կամ անտառաշերտեր հիմնելուց հետո որքանով է կանխվում էրոզիան և որքան է կազմում կանխվող վնասի մեծությունը։ Ստացվող արդյունքների մասին տվյալներ չկան նաև հակաէրոզիոն նախագծերում։ Չի հաշվարկվում բնապահպան ծախսումների տնտեսական արդյունավետությունը։

Հողային ռեսուրսների պահպանության համար անհրաժեշտ է գյուղատնտեսությանը հատկացվող կապիտալ ներդրումների կառուցվածքի հետագա կատարելագործում՝ հանրապետությունում մելիորատիվ միջոցառումների մեջ տարբեր աշխատանքների ճիշտ հարաբերակցություն սահմանելու ուղղությամբ։ Հանրապետության բնական պոտենցիալի պահպանության խնդիրների լուծման կարևորությունից ելնելով, անհրաժեշտ է առավել ռացիոնալ, գիտականորեն հիմնավորված օգտագործել հողային ռեսուրսները՝ արտադրական գործունեության ընթացքում հաշվի առնելով նաև հողօգտագործումը բնութագրող էկոլոգիական գործոնի նշանակությունը։

ОСОБЕННОСТИ ЭКОЛОГО-ЭКОНОМИЧЕСКОГО АСПЕКТА ЗЕМЛЕПОЛЬЗОВАНИЯ

СОФЬЯ ПЕТРОСЯН

Резюме

Вопросы воспроизводства земельных ресурсов, их охраны и рационального использования приобретают особо важное значение для АрмССР, характеризующейся специфическими экологическими параметрами в условиях резкой территориальной ограниченности и высокими антропогенными нагрузками.

Сложившаяся практика нерационального использования земельных ресурсов республики приводит к значительному экономическому ущербу и к ухудшению качества окружающей среды. В этой связи весьма важное значение приобретает выявление оптимальных границ взаимоотношений социально-экономических и экологических аспектов землепользования. Особую роль следует придать активизации экологического фактора.

Задача заключается в том, чтобы экономические и экологические аспекты проблемы землепользования не решались бы односторонне, не допускалась бы возможность их трансформации.